ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ք. Եղեգնաձոր

«20»....05..... 2015թ N 49

2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-ԻՆ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թվականի մայիսի 6-ի ,,ՀՀ մարզերում պետական կառավարման մասին,, թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6–րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001թ. օգոստոսի 16-ի ,,Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին,, N 762 որոշման 49 և 50-րդ կետերի պահանջները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել մարզային մրցութային հանձնաժողովի կողմից 2015 թվականի մայիսի 6-ին անցկացրած մրցույթի արդյունքների վերաբերյալ արձանագրությունը

2. Մրցույթում հաղթող ճանաչել.

2.1 Եղեգնաձորի «ՎԱՄ» ՍՊԸ-ին հետևյալ երթուղիներում
- Եղեգնաձոր - Աղավնաձոր
- Եղեգնաձոր - Ելփին
- Եղեգնաձոր - Աղնջաձոր
- Եղեգնաձոր - Վարդահովիտ
- Եղեգնաձոր – Մալիշկա
- Եղեգնաձոր – Վերնաշեն

2.2 Անհատ ձեռնարկատեր Վրույր Խաչատրյանին հետևյալ երթուղում.
- Վայք - Եղեգնաձոր

3. Հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Խ. Ասլանյանին՝ մրցույթում հաղթող ճանաչված «ՎԱՄ» ՍՊԸ-ի և անհատ ձեռնարկատեր Վ. Խաչատրյանի հետ կնքել պայմանագրեր և ներկայացնել մարզպետի հաստատմանը:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Խ. Ասլանյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ